ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» հունիսի 2014թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Դրամական փոխհատուցում տրամադրելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի ապրիլի 5-ի N629-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N25-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետից հանել «մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը,» բառերը,

2) որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «որոնք հրավիրվել են նստաշրջանի ընթացքում,» բառերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության նվազագույն աշխատավարձի չափով: Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N25-Ա որոշմամբ հաստատվել է դրամական փոխհատուցում տրամադրելու կարգը և ժամկետները: Նշված ակտով փոխհատուցում ստանալու դիմում ներկայացնելու համար նախատեսված է որոշակի ժամկետ, այն է՝ ավագանու անդամի իր լիազորությունները ստանձնելուց հետո, մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը: Սույն որոշման նախագծով վերացվում է ավագանու անդամի համար դիմում ներկայացնելու ժամկետի սահմանափակումը՝ հնարավորություն տալով ավագանու անդամին փոխհատուցում ստանալու դիմում ներկայացնել նաև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ից հետո:

Մյուս փոփոխությունը վերաբերում է այն դեպքերին, երբ ավագանու անդամը նստաշրջանի ընթացքում հրավիրված Երևանի ավագանու և մշտական հանձնաժողովի նիստերին չմասնակցելու հետևանքով զրկվում է դրամական փոխհատուցումից, որը կարող է մեկնաբանվել այնպես, որ փոխհատուցումը տրամադրվում է բացառապես նստաշրջանի ընթացքում ավագանու և հանձնաժողովի նիստերին մասնակցելու դեպքում: Սակայն, հաշվի առնելով, որ նստաշրջանից դուրս ևս ավագանու անդամը մասնակցում է և պարտավոր է մասնակցել ավագանու արտահերթ, ինչպես նաև մշտական հանձնաժողովի հերթական կամ արտահերթ նիստերին, որի դիմաց տրամադրվում է (տրամադրվել է) փոխհատուցում, ուստի ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N25-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N25-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N25-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N25-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ